

## Յարտոգոյացում (statement)

Մելգոնեանի փակման հարցը համահայկական լուրջ խնդիր մըն է, եւ պետք չէ որեւէ կողմ զայն շահագործէ իր նպատակները իրագործելու համար: Աւելին, Մելգոնեանի նման հաստատութեան մը փակուիլը, ինքնին մեծ հարուած մըն է սփիւռքի հայապահպանման ճիգերուն:

Ինչպէս գիտեք, Պոլսոյ Պատրիարքի նախաձեռնութեամբ եւ Մելգոնեանի սաներու եւ բարեկամներու օժանդակութեամբ, հարցը այս պահուս կիպրական դատարաններուն առջեւ կը գտնուի:

Տրամադրութեանս տակ գտնուող տեղեկութիւնները քննելով, համաձայն կը գտնուիմ Պատրիարք Յօր եւ Սաներու քայլերուն, եւ կարելիութեան սահմաններէն ներս, իմ ծառայութիւններս լրիւ կերպով կը տրամադրեմ այս ազգային հարցի լուծման աշխատանքներուն օգտակար ըլլալու համար:

Շատ լաւ կ'ըլլար, եթէ Զալիֆորնիայի Սանուց Միութեան վերջերս Կիպրոս այցելած երեք ներկայացուցիչները առիթը աւելի լաւ օգտագործէին եւ կիպրահայութեան փոխանցէին մանրամասն, ճշգրիտ ու ամբողջական տեղեկութիւններ, որոնք խիստ կարելոր կը նկատենք «Մելգոնեան թղթածրար»ի լրիւ լուսաբանման համար:

Անշուշտ, պետական ներկայացուցիչ ընտրուելէս ետք, հետամուտ պիտի ըլլամ որ թափանցիկութիւն տիրէ այս եւ նման շատ հարցերու շուրջ, որովհետեւ կիպրահայութիւնը իրաւունք ունի գիտնալու իրականութիւնը:

ՎԱՐԴԳԷՍ ՄԱՅՏԵՍԵԱՆ

Նիկոսիա, 16 Մայիս 2006